



Ամերիկայի գլխաւոր պետ մը.

Եգիպտացոյ մը կարգէ դուրս
վեհաւանութիւնը:

Ատենօք Գահիրէի մէջ տաճիկներ
ըուն գլխաւոր մզկիթը յանկարծ գի-
շեր ատեն բռնկելով, բոլոր քաղաքը
տակն ու վրայ եղաւ, բայց կրակը չկա-
րենալով մարել ամբողջ մզկիթը այրե-
ցաւ: Աս որ եղաւ նէ տաճիկներուն գը-

լուխը տարցաւ, և կարծելով որ քաղ-
քին մէջ գտնուող քրիստոնեաները
բռնկեցուցած ըլլան զանիկայ, ուստի
կիրքերնին յագեցնելու համար՝ շատ մը
քրիստոնեաներ մէկ եղած գնացին
քրիստոնէից վրայ, ու կեցած տեղեր-
նուն կրակ տուին, առանց մտածելու
թէ մէկ այսպիսի մեծ չարիք մը ան-
տարբեր վերջ չիկրնար ունենալու. և
իրօք այնպէս եղաւ, վասն զի քաղքին

կուսակալը իմանալով առ անմիտ և միանգամայն չարասիրտ երիտասարդաց ըրածը, մէկէն զօրք խրկեց վրանին ու զամէնքը բռնել տուաւ, և վրանին ըստ օրինաց խիստ դատաստան ըրաւ իբրեւ մահապարտ: Բայց որովհետեւ այնչափ արիւն թափելը խիստ չափազանց էր մէկ այնպիսի բանի մը համար որ աւելի կըքով եղած է քան թէ չարութեամբ, և միանգամայն բոլորովին աչք գոցելն ալ անիրաւ կ'ըլլար, ուստի կուսակալը միջին ճամբան բռնելով, այսպիսի հնարք մը մտածեց: Հրաման հանեց որ բռնուած յանցաւորներուն թուովը տոմսակներ շինուին, որոնց մէկ քանիին վրայ միայն գրուի մահապարտութեան վճիռը, իսկ մնացածները պարապ ըլլան՝ առանց վրանին բան գրելու: Ետքը ամբողջ տոմսակները գրուին սափորի մը մէջ, ու յանցաւորները կարգաւ հանելով մէյմէկ տոմսակ, իւրաքանչիւրը իրեն հանածին համեմատ պատժուի, այսինքն ով որ մահապարտութեան տոմսակ հանէ, անիկայ մահուան դատապարտուի, և ով որ պարապ տոմսակ հանէ, անիկայ միայն ծեծ ուտելով ազատի: Այսպէս ամեն բան պատրաստուելէն ետքը՝ սափորը տոմսակներով մէջտեղ բերին և յանցաւորները ամենքը մէյմէկ տոմսակ հանելով, մահապարտեալները սկսան մէկիկ մէկիկ սպաննել: Երբոր կարգը եկաւ երիտասարդի մը, որ պիտի սպաննէին, սկսաւ յանկարծ կանչել յուսահատ ձայնով մը, որ ամենուն սիրտը կը շարժէր. « Ես չեմ ցաւիր կեանքս կորսնցունելուս վրայ, այլ կը ցաւիմ մտածելով իմ խեղճ և ողորմելի ծնողքս հայրս մայրս, որոնք բոլորովին երեսի վրայ պիտի մնան. ինչպէս պիտի կարենան խեղճերը ապրիլ առանց ինծի, որոնց նեցուկը և ամեն բանը ես էի որ հիմա պիտի մեռնիմ՝ ողորմեալաբար »: Աս որ կը լսէ իր ընկերներէն մէկը՝ որ մահուանէ խալսեր էր, « Մի լար բարեկամ, կ'ըսէ մէկային, ես չունիմ ոչ հայր և ոչ մայր. իմ կեանքըս աշխարհքիս վրայ մարդու մ'ալ

հարկաւոր չէ, տուր ինծի քուկին տոմսակդ և դուն առ իմինս, ու գնա դուն հողա քու հայրդ ու մայրդ, ես սիրով կը մեռնիմ քու տեղդ »: Եզիպտացւոյն ասաստիճանի մեծանձնութիւնը բոլոր ներկայ եղողներուն գովթը շարժեց. իսկ կուսակալը առ բանս լսելուն պէս, իրեն սիրոյն համար մէկալ մահապարտներն ալ ազատեց:

ԿՈՄԾԻ

ՋԵՐՄՈՒԹԻՒՆ

Ջերմութեան կամ տաքութեան վրայ արդէն այս օրագրիս մէջ ատեն ատեն տեղեկութիւն տուած ենք. հոս իր քանի մը սովորական երևոյթներուն վրայ կ'ուզենք խօսիլ պարզապէս, անոնց պատճառները տալով:

Ա

Երբ ձեռուրնիս վառած ճրագի մը վրայ կ'երկընցընենք, տաքութիւնն վառած ճրագէն ելլելով ձեռուրնիս կը տաքցընէ: — Առնենք քարի կտոր մը ձեռուրնիս, տաքութիւն չենք զգար: Կըտոր մը ժամանակ վառած ճրագին վրայ բռնենք քարի կտորը, ու վերջը առնենք ձեռուրնիս. կը զգանք որ քարէն տաքութիւն կ'ենէ ու մեր ձեռքին կը հաղորդի:

Քարն ուստի առաւ այդ տաքութիւնը զոր քիչ առաջ չունէր. — ճրագին բոցէն: — Երբոր տաքցած քարի կտորը ձգենք պաղ ջրի մէջ՝ քարն կը պաղի: Ո՛ւր կ'երթայ տաքութիւնն. — Ջրին մէջ:

Ասկէ կ'իմանամք՝ որ տաքութիւնն կրնայ զատուիլ, ու մարմնէ մը ուրիշ մարմնոյ մէջ անցնիլ: Գաւաթով մը տաք ջուր՝ եթէ խօթելու ըլլանք ուրիշ ամանով պաղ ջրի մէջ, տաք ջրին ջերմութիւնն պաղին մէջ կ'անցնի:

Ջերմութիւնն ինչ բանէ առաջ կու